

և նոր բլուր շէնքերը բարձր պարսպով մը կը շրջապատէ. այնպէս որ վանքին շէնքերը հեռուէն կ'երեւնային ձուածն (éllipse) դիրքով, ինչպէս կը նկարագրէ Սկիւթուպոլսեցին: Այս վիճակին մէջ տեսած էր նաև ուսուցչի Դանիէլ կրօնաւորը ԺԲ. դարուն (1106), ահա իր խօսքերը. «Մար—Սարայի վանքին տրեւելքը, լերան մը ետեւը, տասն մղոն հեռի կը գտնուի Ս. Եւթիմիոսի վանքը...: Ան շինուած է հովիտի մը մէջ. բաւական հեռուէն շրջապատուած կը տեսնուի քարէ լեռներէ եւ եկեղեցին շինուած էր բարձր տեղի մը վրայ»:

Ձուածնի առանցքին հիւսիսային ծայրը Փիտոս սարկաւազը շինել տուաւ աշտարակ մը, իբր միջնաբերդ եւ ամրութիւն բլուր անապատին. նոյն աշտարակին տակը կը գտնուէր վանքին դուռը. հասարակաց գերեզմանատունն ալ վանքին և աշտարակին մէջ տեղն էր:

Շէնքերու ամբողջութիւնը կ'երեւնար բերդի մը տեսքով. հետագայ դարերը արգարացուցին պաշտպանողական այս միջոցները, երբ Թալապլիտները յարձակեցան վանքին այս միջնաբերդին վրայ: Վանքին ու եկեղեցիին այս շինութիւնները երեք տարիէն աւարտեցան. Երուսաղէմի Մարտիրոս պատրիարքը հանդիսաւոր կերպով կատարեց նաւակատիքը և Փիտոսն ալ կոչուեցաւ Տորայի (ծովեզերեայ քաղաք Պաղեստինի) եպիսկոպոսութեան: Նոր վանքը բլուրի մը վրայ շինուած՝ կը ժպտէր սպիտակ քարերու չքնաղ զարդարանքովը. դրան աշտարակը հպարտօրէն՝ իբր տիրապետող դաշտին, ամէն կողմէն կ'երեւնար. Սկիւթուպոլսեցին, որ շատ տարիներ Սահէլի այս վանքին մէջ ապրած էր, շատ գեղեցիկ կերպով կը նկարագրէ եւ կը նկատէ գայն միայնութեան ժպիտը: Փիտոսի այս վերաշինութիւնը կը մնայ մինչև Ժ. դար, իսկ ըստ Փոկասի և վանական Եպիփանի՝ մինչև ԺԲ. դար. յետոյ կ'սկսի քանդումը. հարաւէն եկող ռոյժերը տակաւ առ տակաւ աւերակոյտի մը կը վերածեն այս բերդանման հաստատութիւնը և զարերէ ի վեր Խան էլ—Ահմարի աւերակները միայն կ'երեւային:

Դանի մը տարիէ ի վեր պեղումներով կը հետազօտուին Եւթիմիոսի վանքին վիթխարի աւերակները Երուսաղէմի Բրիտանական հնախօսական վարժարանին հաշուոյն. պեղումները յառաջ տարուած են և երեւան ելած են վանքին եկեղեցին ու այլ